ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
27.09.2019թ. կնքված N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-1
ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի

Ք. Երևան <<30>> դեկտեմբերի 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավոր կատարող Ա. Մարգարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բիդեք>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 27.09.2019թ. կնքված N ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքները շարունակել իրականացնել համաձայն նախագծային փաստաթղթերի՝ ձմեռային դադարից հետո, այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

1.2 Պայմանագրի N 3 Հավելվածի <<67 450 000>> թիվը փոխարինել <<22 500 047>> թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագրի գործողությունը տարածվում է կողմերի՝ մինչև համաձայնագրի կնքումը փաստացի ծագած հարաբերությունների վրա, ինչպես նաև գործում է մինչև կողմերի կողմից սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	<<Բիդեք>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Նեկրասովի 86
ՖՆ աշխատակազմի գործառնական	հեռ.՝ 093 10 55 22
վարչություն	էլ.փոստ info@bedeck.am
Հ/Հ 900011028314	<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ1570015559920100
Կոմիտեի գլխավոր քարտուղարի	ՀՎՀՀ 00450801
պարտականությունները ժամանակավոր	Տնօրեն
կատարող	
_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ	_____ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ. Տ.	Կ.Տ